



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ.594000

Էլ. փոստ info@moj.am

03.06.2016, N 01/19/6817-10

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զավադյան

Ի պատասխան Ձեր 2016 թվականի ապրիլի 20-ի թիվ 15.1-06/000289-16 գրության՝ կից ներկայացվում է «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝




ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Սեդա Մելքումյան

ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն, Հեռ. /010/ 59 -41-19



**ՀԱՎԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի
վերաբերյալ**

1. Նախագիծն իր մեջ պարունակում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված կոռուպցիոն գործոնը, որը դրսևորվում է իրավական-լեզվաբանական կոռուպցիոն ռիսկերի առկայությամբ: Իրավական-լեզվաբանական կոռուպցիոն ռիսկերի առկայությունը որոշվում է՝ ելնելով օրենսդրական տեխնիկայի կանոններից: Կոռուպցիոն գործոններն արտահայտվում են իրավական ակտում երկիմաստ եզրույթների, իրավական ակտի լեզվի ոչ հստակության, պարզության, մատչելիության գնահատողական բնույթի հասկացությունների, միևնույն հասկացությունը տարբեր եզրույթներով արտահայտելու միջոցով: Այսպես, գտնում ենք, որ նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ. ենթակետի «օբյեկտիվ պատճառներ» ձևակերպումը գնահատողական բնույթ ունի և չի բխում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրում ստացած իրավական որոշակիության սկզբունքից: Հիշյալ կոռուպցիոն գործոնի առկայությունը իր հերթին նպաստում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված կոռուպցիոն գործոնի առաջացմանը, որը դրսևորվում է լիազորությունների հայեցողական լայն շրջանակի առկայությամբ: Լիազորությունների հայեցողական լայն շրջանակի առկայությունը հիմնականում դրսևորվում է որոշակի հանգամանքների առկայության դեպքում պաշտոնատար անձանց սեփական



հայեցողությամբ գործելու անհարկի լայն հնարավորություն ընձեռելու միջոցով, այդ թվում՝ որոշումների ընդունման ժամկետների և պայմանների, ինչպես նաև այլընտրանքային լիազորությունների դիտարկման միջոցով, հետևաբար, նաև՝ պաշտոնատար անձին հնարավորություն է ընձեռվում սեփական հայեցողությամբ ընտրություն կատարել վարքագծի տարբերակների միջև առանց նախատեսելու, թե որ դեպքում պաշտոնատար անձը պարտավոր է ընտրել վարքագծի այս կամ այն տարբերակը: Ասվածը դրսևորվում է նրանում, որ նախագծով առաջարկվող կարգավորումը հնարավորություն չի տալիս հասկանալու, թե ինչպիսի հանգամանքների առկայությունը կրեդիտավորողի կողմից կհամարվի «օբյեկտիվ պատճառ»:

2. Նախագիծն իր մեջ պարունակում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված կոռուպցիոն գործոնը, որը դրսևորվում է կարգավորման բացերի առկայությամբ: Կարգավորման բացերի առկայությունը դրսևորվում է այս կամ այն հարցի ոչ կարգավորված լինելու, չկարգավորված ոլորտի այս կամ այն բնույթի գործունեության, ինչպես նաև պետական մարմիններին վերապահված գործառույթների կամայական մեկնաբանման հնարավորության միջոցով: Այսպես, նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասի «և (կամ) այլ նվազագույն պահանջներ» ձևակերպումը անորոշ է և թույլ չի տալիս հասկանալ, թե ինչ նվազագույն պահանջների մասին է խոսքը: Նման ձևակերպումը հակասում է նաև իրավական որոշակիության սկզբունքին:

3. Նախագիծն իր մեջ պարունակում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով նախատեսված կոռուպցիոն գործոնները: Առաջինը



դրսևորվում է պաշտոնատար անձանց իրավունքների ու պարտականությունների ոչ հստակ լինելով: Պաշտոնատար անձանց իրավունքների ու պարտականությունների ոչ հստակ լինելը, որպես կոռուպցիոն գործոն, հիմնականում արտահայտվում է նորմատիվ իրավական ակտում պետական մարմնի (պաշտոնատար անձի) իրավասությունները «իրավասու է» կամ «կարող է» արտահայտություններով ձևակերպելու միջոցով, ինչը հանգեցնում է իրավասությունը, որպես հնարավորություն, այլ ոչ թե որպես պարտավորություն մեկնաբանելուն: Իսկ երկրորդը՝ լիազորությունների հայեցողական լայն շրջանակի առկայությամբ, այդ թվում՝ որոշումների ընդունման ժամկետների և պայմանների, ինչպես նաև այլընտրանքային լիազորությունների դիտարկմամբ: Լիազորությունների հայեցողական լայն շրջանակի առկայությունը հիմնականում դրսևորվում է որոշակի հանգամանքների առկայության դեպքում պաշտոնատար անձանց սեփական հայեցողությամբ գործելու անհարկի լայն հնարավորություն ընձեռելու միջոցով, այդ թվում՝ որոշումների ընդունման ժամկետների և պայմանների, ինչպես նաև այլընտրանքային լիազորությունների դիտարկման միջոցով, հետևաբար, նաև՝ պաշտոնատար անձին հնարավորություն է ընձեռվում սեփական հայեցողությամբ ընտրություն կատարել վարքագծի տարբերակների միջև առանց նախատեսելու, թե որ դեպքում պաշտոնատար անձը պարտավոր է ընտրել վարքագծի այս կամ այն տարբերակը: Այսպես, նախագծի 17-րդ հոդվածով նախատեսվում է կրեդիտավորողի պատասխանատվությունը՝ սահմանելով, որ կենտրոնական բանկը կարող է սույն օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական ակտի պահանջների խախտման դեպքում կիրառել նախագծով նախատեսված պատասխանատվության միջոցը: Ստացվում է, որ յուրաքանչյուր դեպքում կենտրոնական բանկն ինքն է որոշում նշանակել տուգանք, թե ոչ:



**«Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բանկերի, վարկային
կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի
կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու
մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության
օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հրապարակային սակարկությունների
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն
կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բանկերի, վարկային
կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի
կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին»,
«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում
լրացումներ կատարելու մասին», «Հրապարակային սակարկությունների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ
օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009
թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի
հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման
իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-
րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

**ՀՀ ԱՆ իրավական ակտերի
փորձաքննության գործակալության պետ՝**

Կ.ԽՏԻՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

Օրենսդրական փոփոխությունների ներկայացված փաթեթով նախատեսվում է ընդունել «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև դրանից բխող փոփոխություններ կատարել համապատասխան ոլորտային օրենքներում: Առաջարկվող փոփոխություններն անհրաժեշտ ենք համարում դիտարկել համակարգային կապի մեջ և քննարկել միասնական պետական փորձագիտական եզրակացության շրջանակներում, քանի որ հարակից օրենքներում կատարվող փոփոխություններն արտացոլում են հենց «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող իրավակարգավորման նպատակն ու սահմանները:

1. Նախ և առաջ, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նախագծին կից ներկայացված հիմնավորմանը, որը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 13 արձանագրային որոշման հավելվածի պահանջներին: Հիշյալ որոշմամբ



սահմանվում է, որ հիմնավորման միջոցով նախագիծը մշակող մարմինը պարզաբանում է իրավական ակտի ընդունման նպատակը, կարգավորման անհրաժեշտությունը, կարգավորման համար ընտրված եղանակի նպատակահարմարությունը, պարզաբանում է նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը, իրավական ակտի ընդունմամբ ակնկալվող արդյունքները: Նորմատիվ իրավական ակտի ընդունման հիմնավորմանը առավել խիստ բովանդակային պահանջներ են առաջադրվում, մասնավորապես, օրենքների պարագայում՝ հաշվի առնելով դրանցով կարգավորվող հասարակական հարաբերությունների բնույթը և այդ ակտերի տեղն իրավական ակտերի համակարգում: Ներկայացված նախագծի հիմնավորման մեջ բացակայում են տվյալներ գործող օրենսդրական դաշտի, առկա իրավական կարգավորումների, կարգավորման ենթակա հարաբերությունների ոլորտում գործնականում առկա խնդիրների, հնարավոր օրենսդրական բացերի, ուսումնասիրված միջազգային փորձի վերաբերյալ, ինչը հնարավորություն չի տալիս բացահայտելու առաջարկվող կարգավորումների էությունը, հիմնավորվածությունը և հենց այս կարգավորումները ընտրելու նպատակահարմարությունը: Այս առումով նախագծի հիմնավորումն անհրաժեշտ է լրամշակել:

2. Նախագիծն ընդհանուր առմամբ կրկնում է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի կարգավորումները, ավելին՝ նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ բնակարանային հիփոթեքային կրեդիտների տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման, գովազդի, կրեդիտավորողի և կրեդիտառուի միջև հաղորդակցման կարգի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով: Այս առումով, առաջանում է նախագծի ընդունման անհրաժեշտության հարցը: Ինչպես բխում է նախագծին կից ներկայացված հիմնավորումից, նախագծի նպատակը բանկերի կողմից տրամադրվող հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանների և կարգի վերաբերյալ միասնական կանոնների սահմանման միջոցով կրեդիտառուների իրավունքների պաշտպանությունն է, «հիփոթեքային շուկայի զարգացման միջոցով հիփոթեքային վարկերը հասարակության առավել լայն զանգվածներին հասանելի դարձնելը», այսինքն՝ կարող ենք



եզրակացնել, որ նախագծի նպատակը հենց հիփոթեքի, հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանագրերի հետ կապված հարաբերությունների կարգավորումն է, մինչդեռ նախագիծը ոչ մի էական առանձնահատկություն չի նախատեսում բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման պայմանագրերի վերաբերյալ: Այս առումով, գտնում ենք, որ անհրաժեշտ է ուսումնասիրել համապատասխան միջազգային փորձ՝ հիփոթեքային վարկերի կրեդիտառուների իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ իրավական մեխանիզմներ նախատեսելու նպատակով: Այլապես, նախագծով առաջարկվող կարգավորումների պարագայում ստացվում է, որ օրենսդրական կարգավորում է նախատեսվում միայն բնակարանային կրեդիտավորման պայմանագրերի համար, իսկ հիփոթեքի պայմանագրի, դրա առանձնահատկությունների հետ կապված հարցերը մանրամասն կարգավորված չեն և, փաստորեն, պետք է առաջնորդվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորումներով: Վերոգրյալից ելնելով՝ գտնում ենք, որ նախագիծն ունի լրամշակման կարիք:

Այդուհանդերձ, հարկ ենք համարում անդրադառնալ նախագծով առաջարկվող որոշ կարգավորումների: Այսպես՝

1) նախագծի 3-րդ հոդվածն անհրաժեշտ է ամբողջությամբ խմբագրել՝ սահմանելով միայն օրենքում կիրառվող հասկացությունները՝ առանց կարգավորումների, իսկ կարգավորումները նախատեսել համապատասխան հոդվածներում:

2) հիփոթեքի հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտը ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն է, որի 260-րդ հոդվածի համաձայն՝ հիփոթեք է համարվում անշարժ գույքի գրավը, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի և կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույք գնելու իրավունքի գրավը: Ինչ վերաբերում է կրեդիտավորման հետ կապված հարաբերություններին, ապա բացի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, գործում է նաև «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք): Օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում են բացառություն կազմող այն պայմանագրերը, որոնց վրա չեն տարածվում սույն Օրենքի կարգավորումները: Ի թիվս այլ պայմանագրերի՝ սահմանվում են



նաև կրեդիտավորման այն պայմանագրերը, որոնք հիմնականում նախատեսված են **հողի կամ գոյություն ունեցող կամ կառուցվող կամ կառուցվելիք շենքի (շինության) կամ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման կամ պահպանման համար, ինչպես նաև այն կրեդիտավորման պայմանագրերի վրա, որոնք նախատեսում են կրեդիտի տրամադրում շենքի (շինության) կամ բնակարանի վերանորոգման, վերակառուցման կամ բարելավման նպատակով:**

Այս առումով, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանվող «բնակարան» հասկացությանը, որը նախագիծը նույնացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 222-րդ հոդվածով սահմանված «բնակարան» հասկացության հետ: Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հիշյալ հոդվածով կարգավորվում են բազմաբնակարան շենքի բնակարանի և ոչ բնակելի տարածքի, ինչպես նաև ստորաբաժանված շենքի ոչ բնակելի տարածքի նկատմամբ սեփականության իրավունքի առանձնահատկությունները: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հիշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բնակարանը բնակության համար նախատեսված և իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված կամ համարակալված տարածքն (շինությունն) է: Սակայն, սույն կարգավորումը, համակարգային կապի մեջ դիտարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նույն հոդվածի այլ մասերով նախատեսված իրավակարգավորումների հետ, կարող ենք փաստել, որ խոսքը բազմաբնակարան շենքում գտնվող բնակարանների մասին է: Այս առումով, հարց է առաջանում՝ ինչու է նախագիծը բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման պայմանագրի առարկայի այսքան նեղ շրջանակ ուրվագծել: Միաժամանակ, հարկ է անդրադառնալ նախագծի նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով տրվող «բնակարանային հիփոթեքային կրեդիտ» հասկացությանը, որի նպատակը, համաձայն նախագծի, բնակարան ձեռք բերելը, կառուցելը, վերակառուցելը, վերանորոգելը, բարեկարգելը կամ արդիականացնելն է և որի վերադարձելիությունն ապահովված է այդ բնակարանի հիփոթեքով՝ ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 270-րդ հոդվածի և 271-րդ հոդվածի: Չէ որ կրեդիտառուն կարող է բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման



պայմանագիր կնքել անհատական բնակելի տուն ձեռք բերելու նպատակով ևս:
Վերոշարադրյալից ելնելով՝ գտնում ենք, որ նախագծի քննարկվող կարգավորումն ունի
վերանայման կարիք:

3) նախագիծն իր մեջ պարունակում է Հայաստանի Հանրապետության
կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի
նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման
իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-
րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված կոռուպցիոն գործոնը, որը դրսևորվում է
իրավական-լեզվաբանական կոռուպցիոն ռիսկերի առկայությամբ: Իրավական-
լեզվաբանական կոռուպցիոն ռիսկերի առկայությունը որոշվում է՝ ելնելով օրենսդրական
տեխնիկայի կանոններից: Կոռուպցիոն գործոններն արտահայտվում են իրավական ակտում
երկիմաստ եզրույթների, իրավական ակտի լեզվի ոչ հստակության, պարզության,
մատչելիության գնահատողական բնույթի հասկացությունների, միևնույն հասկացությունը
տարբեր եզրույթներով արտահայտելու միջոցով: Այսպես, գտնում ենք, որ նախագծի 3-րդ
հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ. ենթակետի «օբյեկտիվ պատճառներ» ձևակերպումը
գնահատողական բնույթ ունի և չի բխում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրում ստացած
իրավական որոշակիության սկզբունքից: Հիշյալ կոռուպցիոն գործոնի առկայությունը իր
հերթին նպաստում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի
հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն
բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը
հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 3-րդ
ենթակետով նախատեսված կոռուպցիոն գործոնի առաջացմանը, որը դրսևորվում է
լիազորությունների հայեցողական լայն շրջանակի առկայությամբ: Լիազորությունների
հայեցողական լայն շրջանակի առկայությունը հիմնականում դրսևորվում է որոշակի
հանգամանքների առկայության դեպքում պաշտոնատար անձանց սեփական
հայեցողությամբ գործելու անհարկի լայն հնարավորություն ընձեռելու միջոցով, այդ թվում՝
որոշումների ընդունման ժամկետների և պայմանների, ինչպես նաև այլընտրանքային



լիազորությունների դիտարկման միջոցով, հետևաբար, նաև՝ պաշտոնատար անձին հնարավորություն է ընձեռվում սեփական հայեցողությամբ ընտրություն կատարել վարքագծի տարբերակների միջև առանց նախատեսելու, թե որ դեպքում պաշտոնատար անձը պարտավոր է ընտրել վարքագծի այս կամ այն տարբերակը: Ասվածը դրսևորվում է նրանում, որ նախագծով առաջարկվող կարգավորումը հնարավորություն չի տալիս հասկանալու, թե ինչպիսի հանգամանքների առկայությունը կրեդիտավորողի կողմից կհամարվի «օբյեկտիվ պատճառ»:

4) գտնում ենք, որ նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվող «բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման պայմանագիր» հասկացությունն ունի հստակեցման կարիք՝ նշելով պայմանագրի կնքման նպատակը, քանի որ առաջարկվող կարգավորումն, ըստ էության, կրկնում է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի նույնաբովանդակ դրույթը՝ թույլ չտալով շեշտել բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման հարաբերությունների առանձնահատկությունը:

5) նախագծի 4-րդ հոդվածով կարգավորվում են տեղեկատվական ամփոփագիր ունենալու, տեղեկատվական ամփոփագրում ներառվող տեղեկատվության հետ կապված հարաբերությունները: Հիշյալ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետի համաձայն՝ տեղեկատվական ամփոփագրում ներառվում է՝ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ տեղեկատվական ամփոփագրում պարտադիր ներառման ենթակա այլ տեղեկատվություն: Կենտրոնական բանկն իրավունք ունի իր նորմատիվ իրավական ակտերով սահմանել նաև տեղեկատվական ամփոփագրեր կազմելու ձևի, տեղեկատվական ամփոփագրերում ներառման ենթակա տեղեկատվությունների բովանդակության, ձևաչափերի նկատմամբ պահանջներ, պարտադիր կիրառման ենթակա տեքստեր, օրինակելի տարբերակներ և (կամ) այլ նվազագույն պահանջներ: Նախագծի սույն կարգավորումը հարկ ենք համարում քննարկել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո, համաձայն որի՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական



ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին: Այս առումով, գտնում ենք, որ նախագծով Կենտրոնական բանկին ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու լիազորություն վերապահող լիազորող նորմը բավականաչափ հստակ չէ և չի բխում իրավական որոշակիության սկզբունքից: Մասնավորապես, խոսքը վերաբերում է նախագծի քննարկվող կարգավորման «այլ տեղեկատվություն» ձևակերպմանը, որը հնարավորություն չի տալիս հասկանալ, թե ինչ բնույթի և ծավալի տեղեկատվության մասին է խոսքը: Նախագծի քննարկվող դրույթի առաջին նախադասությունն անհրաժեշտ է հանել նախագծից, իսկ մնացած մասով լիազորող նորմն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ անթույլատրելի է Կենտրոնական բանկին օժտել, օրինակ, բանկերի կողմից «պարտադիր կիրառման ենթակա տեքստեր» սահմանելու իրավասությամբ: Հարկ ենք համարում անդրադառնալ նաև նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետին, որի «կրեդիտառուն կարող է զրկվել բնակարանի նկատմամբ իր իրավունքներից...» ձևակերպումն անթույլատրելի է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված սեփականության իրավունքի պաշտպանության իրավակարգավորումների տեսանկյունից: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվող կարգավորմանը:

6) նախագծի 6-րդ հոդվածում կիրառվող «կրեդիտավորման պայմանագիրը կարող է կնքվել...» ձևակերպումն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ առաջարկվող ձևակերպմամբ ստացվում է, որ պայմանագիրը, բացի օրենքով սահմանված եղանակից, կարող է կնքվել այլ եղանակով ևս: Նախագծի 6-րդ հոդվածի 5-րդ մասից անհրաժեշտ է հանել կրեդիտավորման պայմանագիրը կրեդիտառուին հանձնված լինելու փաստի ապացուցման վերաբերյալ կարգավորումը, քանի որ այն դատավարական կանոն է և ենթակա է կարգավորման բացառապես քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

7) նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասից անհրաժեշտ է հանել «կրեդիտավորողը պարտավոր է ապահովել, որպեսզի» բառերը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կենտրոնական բանկը կարող է իր նորմատիվ ակտերով սահմանել պայմանագրում ներառվող տեղեկատվության համար պարտադիր կիրառման ենթակա տեքստեր..... : Նման



ձևակերպումը, գտնում ենք, խնդրահարույց է նաև ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեսանկյունից: Ստացվում է, որ Օրենքով սահմանվում է լիազորող նորմ, որի իրացումը թողնված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող սուբյեկտի հայեցողությանը: Բացի այդ, լիազորող նորմը բավականաչափ հստակ չէ: Միաժամանակ նախագծից անհրաժեշտ է հանել «պարտադիր կիրառման ենթակա տեքստեր»-ի վերաբերյալ կարգավորումները, քանի որ քննարկվող հարաբերությունների տեսանկյունից միայն օրինակելի ձևերը հաստատելն արդեն իսկ բավարար է: Նույնը վերաբերում է նաև նախագծի 8-րդ հոդվածի 8-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվող կարգավորումներին: Այս առումով, գտնում ենք, որ նախագիծն անհրաժեշտ է խմբագրել:

8) նախագծի 8-րդ հոդվածով կարգավորվում են կրեդիտավորման պայմանագրի գործողության ընթացքում կրեդիտավորողի կողմից կրեդիտառուին տրամադրվող տեղեկատվության հետ կապված հարաբերությունները: Այս առումով, հարկ ենք համարում անդրադառնալ նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասին, համաձայն որի՝ կրեդիտավորողի և կրեդիտառուի միջև հաղորդակցման կարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի դրույթները: Մինչդեռ, նախագծի՝ «կրեդիտառուին տրամադրվող տեղեկատվությունը» վերտառությամբ հոդվածը «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգավորումների հետ գրեթե նույնական կարգավորումներ է նախատեսում: Այս առումով, նախագիծն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ ստացվում է, որ նույն հարաբերությունների վրա միաժամանակ տարածվում են տարբեր իրավական ակտերի նույնաբովանդակ դրույթներ: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում անդրադառնալ նախագծի քննարկվող հոդվածի որոշ կարգավորումների: Այսպես, նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կրեդիտավորման պայմանագրի գործողության ընթացքում կրեդիտավորողը պարտավոր է կրեդիտառուին տեղեկացնել կողմերի միջև հաղորդակցման կարգի փոփոխության մասին: Առաջարկվող ձևակերպմամբ ստացվում է, որ պայմանագրի մի կողմի, տվյալ դեպքում՝ կրեդիտավորողի, նախաձեռնությամբ կարող է հաղորդակցման



կարգի փոփոխություն կատարվել: Սա այն դեպքում, երբ նույն հոդվածի այլ կարգավորումներով հստակ սահմանվում է պայմանագրի կողմերի հաղորդակցման կարգը՝ նախատեսելով սահմանված տեղեկատվության տրամադրման կարգի փոփոխություն միայն կրեդիտառուի նախաձեռնությամբ՝ համաձայն նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասի: Ելնելով վերագրյալից՝ նախագծում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություն՝ հոդվածի տարբեր մասերի միջև ներքին հակասությունը վերացնելու համար: Հարկ ենք համարում անդրադառնալ նաև նախագծի նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված տեղեկատվությանը: Մասնավորապես, նախագծով սահմանվում է կրեդիտավորողի պարտականությունը հայտնել կրեդիտառուին իրավական ակտերի կամ այլ հանգամանքների փոփոխության մասին, որոնք ուղղակի ազդեցություն ունեն կրեդիտավորողի՝ կրեդիտավորման պայմանագրով սահմանված իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության վրա: Այս առումով, հարկ է նկատի ունենալ ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածը, որի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով: Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը սահմանվում են բացառապես օրենքով, այլ ոչ թե այլ իրավական ակտերով, ինչպես նախատեսվում է նախագծում: Այս առումով, գտնում ենք, որ նախագծի քննարկվող կարգավորումներն անհրաժեշտ է վերանայել:

Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասն անհրաժեշտ է խմբագրել՝ հանելով փոստային կապի միջոցով տեղեկատվությունը տրամադրելու վերաբերյալ կարգավորումը և նախատեսելով տեղեկատվության տրամադրման առավել ճկուն մեխանիզմներ (օրինակ՝ հաղորդակցությունն ապահովող կապի այլ միջոցներ): Նախագծի նույն հոդվածի 7-րդ



մասում առաջարկվող ձևակերպումն անորոշ է: Մասնավորապես, «շփոթեցնող», «խրթին», «մոլորեցնող» ձևակերպումներն անհրաժեշտ է որոշակիացնել: Միաժամանակ, իրավական ակտում անհրաժեշտ է խուսափել ժխտողական ոճի ձևակերպումներից և իրավական նորմը շարադրել հակառակ կանոնով: Նախագծի 8-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվում է Կենտրոնական բանկի իրավասությունը՝ իր նորմատիվ իրավական ակտով սահմանելու տեղեկատվության տրամադրման համար «պարտադիր կիրառման ենթակա տեքստեր», «տեղեկացումների ուղարկման ժամկետներ» և այլն: Ստացվում է, որ նախագիծը Կենտրոնական բանկի կողմից ընդունված իրավական ակտին է թողնում այնպիսի հարաբերությունների կարգավորումը, որոնք պետք է սահմանվեն օրենքով կամ կողմերի միջև պայմանագրով: Մասնավորապես, խոսքը վերաբերում է տեղեկատվության տրամադրման ժամկետների սահմանմանը վերաբերող կարգավորմանը: Ինչ վերաբերում է կիրառման համար պարտադիր տեքստեր սահմանելուն, ապա գտնում ենք, որ այս կարգավորումն անհրաժեշտ է հանել նախագծից՝ թողնելով միայն օրինակելի ձևերը հաստատելու վերաբերյալ նախագծով առաջարկվող կարգավորումը:

9) նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նախնական ժամանակացույցի ճշգրտման արդյունքում կարող են փոփոխվել կրեդիտի մարմանն ուղղված վճարների կատարման ժամկետները, իսկ այդ վճարների չափի հանրագումարը կարող է փոփոխվել բացառապես նման փոփոխությունների համար Կենտրոնական բանկի կողմից սահմանված դեպքերում և կարգով: Նախագծով սահմանվող լիազորող նորմը չի բխում իրավական որոշակիության սկզբունքից, ուստի այն անհրաժեշտ է խմբագրել:

Հստակեցման կարիք ունի նախագծի 9-րդ հոդվածի 7-րդ մասի «այլ հանձնարարական» ձևակերպումը, քանի որ պարզ չէ, թե ինչ բնույթի «հանձնարարականի» մասին է խոսքը: Առաջարկվող ձևակերպման տառացի մեկնաբանության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ կրեդիտառուն կարող է կրեդիտավորողին ցանկացած հանձնարարական տալ: Ուստի, գտնում ենք, որ նախագծում անհրաժեշտ է հստակ նշել ավել կատարված վճարների նպատակային ուղղվածությունը:

10) նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «կրեդիտավորողի կամքից չկախված



հանգամանքներ» ձևակերպումն անհրաժեշտ է հստակեցնել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ առաջարկվող ձևակերպումից պարզ չէ, թե ինչ հանգամանքների մասին է խոսքը: Նախագիծը որպես կրեդիտավորման պայմանագրի պայմանների փոփոխման այդպիսի հանգամանք սահմանում է պայմանագրով լողացող տոկոսադրույք նախատեսելու, ինչպես նաև կրեդիտի մասնակի վաղաժամկետ մարման արդյունքում ժամանակացույցում կատարված փոփոխությունը: Ստացվում է, որ պայմանագրի պայմանների փոփոխության մնացած դեպքերը, որոնք կարող են համարվել «կրեդիտավորողի կամքից անկախ հանգամանք» օրենքով չեն սահմանվում: Առաջարկվող կարգավորումը, հարկ ենք համարում քննարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի կարգավորումների լույսի նորքո, որի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պայմանագիրը կողմերի փոխադարձ կամահայտնության արդյունքում կայացված համաձայնությունն է՝ ուղղված քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն: Պայմանագրային հարաբերությունների կայունության ապահովման և պայմանագրի կողմերի իրավունքների պաշտպանության տեսանկյունից գտնում ենք, որ այն դեպքում, երբ պայմանագրի պայմանների փոփոխությունը պայմանավորված չէ կողմերի փոխադարձ համաձայնությամբ, ապա միակողմանի փոփոխման հիմքերն ու պայմանները պետք է հստակ սահմանված լինեն օրենքով: Բացի այդ, կրեդիտավորողի կամքից անկախ հանգամանք» ձևակերպումը հստակ չէ և կարող է տարածական մեկնաբանման տեղիք տալ: Այս առումով, նախագծի քննարկվող կարգավորումն ունի հստակեցման կարիք:

Արդեն իսկ կնքված բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված, հարկ ենք համարում նախագծի հեղինակների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ նախագիծը չի սահմանում այսպես կոչված «մտածելու ժամանակ» կրեդիտառուի համար, ինչը նախատեսված է ինչպես «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքում, այնպես էլ տարածված միջազգային պրակտիկա է (cooling off period):



11) նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել լողացող անվանական տոկոսադրույքի բարձրացման դեպքում նոր տոկոսադրույքի կիրառման պահը՝ «տեղեկացնելուց» բառը փոխարինելով «տեղեկացնելուն հաջորդող օրվանից» բառերով: Միաժամանակ, նախագծի նույն հոդվածի 4-րդ մասով առաջարկվող կարգավորման վերաբերյալ հարկ ենք համարում նշել, որ պարզ չէ, թե ինչով է պայմանավորված տարեկան լողացող տոկոսադրույքի բարձրացման համար չորս անգամ հնարավորություն նախատեսելը: Ստացվում է, որ յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ կրեդիտավորողը հնարավորություն է ստանում փոփոխել լողացող տոկոսադրույքը, ինչը խիստ անբարենպաստ իրավիճակ է ստեղծում կրեդիտառուի համար՝ չբխելով սույն նախագծի հիմնավորման մեջ նշված նախագծի նպատակներից՝ այն է կրեդիտառուի շահերի պաշտպանությունը:

12) Նախագծի 13-րդ հոդվածով նախատեսվում է կարգավորել կրեդիտի գումարի վաղաժամկետ մարելու հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, հիշյալ հոդվածի 2-րդ մասով սահմանվում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում կրեդիտի գումարի վաղաժամկետ մարման համար կարող է սահմանվել տուժանք կամ այլ անբարենպաստ պայման: Այսպես, հիշյալ մասի 3-րդ կետը նման հիմքերի շարքում նախատեսում է նաև «կենտրոնական բանկի նորմատիվ իրավական սահմանված այլ դեպքերը»: Նախագծի սույն կարգավորումը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրում ստացած իրավական որոշակիության սկզբունքին, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասին 2-րդ կետին: Այս առումով, նախագիծն անհրաժեշտ է խմբագրել: Միաժամանակ, նախագծի նույն հոդվածում սահմանվում են կրեդիտի վաղաժամկետ մարման դեպքում հաշվարկվող տուժանքի չափերը՝ տոկոսային արտահայտությամբ: Սակայն, նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ ներկայացված չեն անհրաժեշտ տվյալներ, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու առաջարկվող կարգավորման էությունն ու կարգավորման հենց այս տարբերակը ընտրելու նպատակահարմարությունը: Միաժամանակ, նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասից անհրաժեշտ է հանել «անբարենպաստ» բառերը:



13) նախագիծն իր մեջ պարունակում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված կոռուպցիոն գործոնը, որը դրսևորվում է կարգավորման բացերի առկայությամբ: Կարգավորման բացերի առկայությունը դրսևորվում է այս կամ այն հարցի ոչ կարգավորված լինելու, չկարգավորված ոլորտի այս կամ այն բնույթի գործունեության, ինչպես նաև պետական մարմիններին վերապահված գործառնությունների կամայական մեկնաբանման հնարավորության միջոցով: Այսպես, նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասի «և (կամ) այլ նվազագույն պահանջներ» ձևակերպումն անորոշ է և թույլ չի տալիս հասկանալ, թե ինչ նվազագույն պահանջների մասին է խոսքը: Նման ձևակերպումը հակասում է նաև իրավական որոշակիության սկզբունքին:

14) նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասից անհրաժեշտ է հանել «և այլ նորմատիվ իրավական ակտերով» ձևակերպումը՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության կարգավորումները:

15) նախագիծն իր մեջ պարունակում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով նախատեսված կոռուպցիոն գործոնները: Առաջինը դրսևորվում է պաշտոնատար անձանց իրավունքների ու պարտականությունների ոչ հստակ լինելով: Պաշտոնատար անձանց իրավունքների ու պարտականությունների ոչ հստակ լինելը, որպես կոռուպցիոն գործոն, հիմնականում արտահայտվում է նորմատիվ իրավական ակտում պետական մարմնի (պաշտոնատար անձի) իրավասությունները «իրավասու է» կամ «կարող է» արտահայտություններով ձևակերպելու միջոցով, ինչը հանգեցնում է իրավասությունը, որպես հնարավորություն, այլ ոչ թե որպես պարտավորություն մեկնաբանելուն: Իսկ երկրորդը՝ լիազորությունների հայեցողական լայն շրջանակի



առկայությամբ, այդ թվում՝ որոշումների ընդունման ժամկետների և պայմանների, ինչպես նաև այլընտրանքային լիազորությունների դիտարկմամբ: Լիազորությունների հայեցողական լայն շրջանակի առկայությունը հիմնականում դրսևորվում է որոշակի հանգամանքների առկայության դեպքում պաշտոնատար անձանց սեփական հայեցողությամբ գործելու անհարկի լայն հնարավորություն ընձեռելու միջոցով, այդ թվում՝ որոշումների ընդունման ժամկետների և պայմանների, ինչպես նաև այլընտրանքային լիազորությունների դիտարկման միջոցով, հետևաբար, նաև՝ պաշտոնատար անձին հնարավորություն է ընձեռվում սեփական հայեցողությամբ ընտրություն կատարել վարքագծի տարբերակների միջև առանց նախատեսելու, թե որ դեպքում պաշտոնատար անձը պարտավոր է ընտրել վարքագծի այս կամ այն տարբերակը: Այսպես, նախագծի 17-րդ հոդվածով նախատեսվում է կրեդիտավորողի պատասխանատվությունը՝ սահմանելով, որ կենտրոնական բանկը **կարող է** սույն օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական ակտի պահանջների խախտման դեպքում կիրառել նախագծով նախատեսված պատասխանատվության միջոցը: Ստացվում է, որ յուրաքանչյուր դեպքում կենտրոնական բանկն ինքն է որոշում նշանակել տուգանք, թե ոչ: Միաժամանակ, նախագծի հիշյալ հոդվածով սահմանվում են տուգանքի կիրառման կարգի, իրավախախտման որակման հետ կապված կարգավորումներ: Այս առումով, հարկ ենք համարում նշել, որ ի կատարումն ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի» 5.6. կետի՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվում են վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի մշակման աշխատանքներ, որի մշակման հիմքում դրված հայեցակարգային մոտեցումներից է այն, որ ապագա օրենսգիրքը պետք է համապարփակ կերպով ընդգրկի բոլոր վարչական իրավախախտումները, իսկ այլ օրենքներում վարչական իրավախախտման դեպքեր այլևս չպետք է նախատեսված լինեն: Այսինքն, չպետք է լինի վարչական պատասխանատվություն, եթե դա նախատեսված չէ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով: Վերոգրյալը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ նախագծի քննարկվող դրույթը դուրս է սույն նախագծի կարգավորման



առարկայից: Միաժամանակ, նախագծի 17-րդ հոդվածի վերաբերյալ հարկ ենք համարում անդրադառնալ դրանում կիրառվող «սույն օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները» ձևակերպմանը, որը խիստ անորոշ է և չի բխում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավական որոշակիության սկզբունքից: Առաջարկվող ձևակերպմամբ օրենքը բավականաչափ հստակ չէ, ինչը հնարարավորություն չի ընձեռում իրավունքի սուբյեկտին իր վարքագիծը համապատասխանեցնել օրենքի պահանջներին: Բացի այդ, առաջարկվող կարգավորմամբ ստացվում է, որ բոլոր տեսակի իրավախախտումների համար, առանց տարբերակման, Կենտրոնական բանկը կիրառելու է նույն չափի տուգանք, ինչը չի համապատասխանում ՀՀ Նախագահի վերոհիշյալ կարգադրությամբ հաստատված ռազմավարական ծրագրում ամրագրված այն ելակետային սկզբունքին, որը պետք է դրվի վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի մշակման հիմքում, այն է՝ արարքի և դրա համար նախատեսված պատասխանատվության համաչափության սկզբունքը: Ելնելով վերոշարադրյալից՝ նախագիծն անհրաժեշտ է վերանայել:

16) նախագծի «օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարքների անվավերությունը» վերտառությամբ 19-րդ հոդվածով սահմանվում են կրեդիտավորման պայմանագրի վերաբերյալ՝ սույն նախագծով նախատեսված պահանջները չկատարելու իրավական հետևանքները: Նախագծի սույն հոդվածի վերաբերյալ նախ և առաջ հարկ ենք համարում նշել, որ այն չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը: Այսպես, նախագծի քննարկվող հոդվածի վերնագրից բխում է, որ հոդվածը պետք է պարունակի կարգավորումներ օրենքի պահանջները չպահպանելով կնքված գործարքների անվավերության վերաբերյալ, մինչդեռ հոդվածի բովանդակությունից բխում է, որ օրենքի պահանջների խախտումները, փաստորեն, կնքված գործարքի անվավերության չեն հանգեցնում, այլ ընդամենը վարչական պատասխանատվության հիմք են: Այս առումով, հարկ ենք համարում անդրադառնալ նախագծի հիմնավորմանը, ըստ որի՝ նախագծի նպատակը միասնական կանոններ



սահմանելու միջոցով կրեդիտառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է: Սակայն, ստացվում է, որ նախագիծը նախատեսում է կրեդիտավորման պայմանագրի նվազագույն պահանջները, սահմանում այն տեղեկատվությունը, որը կրեդիտավորողը պետք է տրամադրի կրեդիտառուին, սակայն այդ պահանջների չկատարումը հանգեցնում է նախագծի 17-րդ և 18-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության: Նախագծի 17-րդ հոդվածով նախատեսվող վարչական պատասխանատվության վերաբերյալ գտնում ենք, որ այն կրեդիտառուի «իրավունքի խախտման» դիմաց ոչ համարժեք փոխհատուցում է, հատկապես նախագծով սահմանվող տուգանքի չափերի պարագայում:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև նախագծի 18-րդ հոդվածին, որի համաձայն՝ կրեդիտառուն սույն օրենքով սահմանված իր իրավունքների խախտման դեպքում իրավունք ունի դիմել դատարան, ֆինանսական համակարգի հաշտարարին կամ առևտրային արբիտրաժ: Իրավունքի խախտման փաստը հաստատվելու դեպքում հոգուտ կրեդիտառուի բռնագանձվում է երեք հարյուր հազար դրամ: Նախագծի նույն հոդվածով սահմանվում է, որ «սույն հոդվածով նախատեսված կրեդիտառուի իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջներով՝ կրեդիտառուի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ»: Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ կրեդիտավորողի և կրեդիտառուի միջև կնքված պայմանագրի վերաբերյալ նրանց միջև առաջացած վեճը մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճ է, որը ենթակա է լուծման քաղաքացիական դատավարության ընդհանուր կանոններով: Այս առումով, պարզ չէ, թե ինչու է նախագծով սահմանվում բռնագանձվող գումարի հստակ չափ, այն դեպքում, երբ, օրինակ դրամական միջոցներ բռնագանձելու հայցերով դատարան դիմելիս յուրաքանչյուր դեպքում հայցագիներ որոշվում է՝ ելնելով հայցվորի կողմից ներկայացված պահանջվող գումարի չափից: Նախագծով առաջարկվող այս կարգավորումը կարծես նույնանում է վարչական տուգանքի հետ, ինչը մասնավոր իրավահարաբերություններում անթույլատրելի է: Միաժամանակ, պարզ չէ նույն հոդվածի «սույն հոդվածով նախատեսված կրեդիտառուի իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում



պահանջներով՝ կրեդիտառուի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ» կարգավորումը նախատեսելու անհրաժեշտությունը՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը: Ելնելով վերաշարադրյալից՝ նախագծի քննարկվող կարգավորումներն անհրաժեշտ է վերանայել:

17) նախագծի 20-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի պահանջների խախտման նկատմամբ վերահսկողություն իրականացնում է Կենտրոնական բանկը: Մինչդեռ, պարզ չէ, թե ինչպես է իրականացվելու վերահսկողությունը, քանի որ կարգը բացակայում է:

18) նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «սույն օրենքը չի տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված կրեդիտավորման պայմանագրերի վրա, բացառությամբ այն դեպքի, երբ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված կրեդիտավորման պայմանագրի՝ սույն օրենքի 7-րդ հոդվածում նշված պայմաններից թեկուզև մեկը փոխոխվում է»: Այս դեպքում ամբողջ կրեդիտավորման պայմանագիրը պետք է համապատասխանեցվի սույն օրենքի պահանջներին: Այս առումով, հարկ է քննարկել դեռևս ուժի մեջ չմտած իրավական ակտի իրավաբանական ուժի հարցը: Այսպես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքով սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած նորմատիվ իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն (իրավական հետևանքներ չեն առաջացնում և իրավահարաբերությունների կարգավորման համար իրավական հիմք չեն): Նույն օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ անձը պարտավոր չէ կատարել իրավաբանական ուժ չունեցող, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած իրավական ակտի պահանջները: Անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել իրավաբանական ուժ չունեցող, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած իրավական ակտի պահանջների խախտման համար:

Ելնելով վերոգրյալից՝ նախագծի քննարկվող կարգավորումն ունի վերանայման կարիք:



Անդրադառնալով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին, որով առաջարկվում է փոփոխել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դատական ծանուցումների վերաբերյալ իրավակարգավորումները, հարկ ենք համարում նշել, որ ի կատարումն ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի» 6-րդ կետի ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվում է ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, որով նախատեսվում է էական փոփոխություններ կատարել դատական ծանուցումների վերաբերյալ առկա իրավակարգավորումներում, այդ թվում՝ նախատեսել պայմանագրային ծանուցման մեխանիզմը, որը համապարփակ կարգավորում է պայմանագրից բխող վեճերի լուծման դեպքում պայմանագրով նախատեսված ծանուցման կարգը կիրառելու հետ կապված հարաբերությունները: Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված նախագծով առաջարկվող կարգավորմանը, ապա, գտնում ենք, որ այն կոնկրետ դեպքի համար նախատեսված դրվագային լուծում է, որը քաղաքացիադատավարական հարաբերություններ կարգավորող հիմնական ակտում նախատեսելը անթույլատրելի է: Միաժամանակ, նախագծերի փաթեթին ներկայացված հիմնավորումից ևս որևէ կերպ չի բխում նման կարգավորում նախատեսելու անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ ԱՆ իրավական ակտերի

փորձաքննության գործակալության պետ՝

Կ.ԽՏՐՅԱՆ